ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ **2023** ԹՎԱԿԱՆԻ **2-**ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

www.eib.am

010 20 30 27

ք. Երևան, Կոմիտաս 37/4

Բովանդակություն

1 Նախաբան

2 Ստուգման արդյունքների ամփոփ պատկեր

3 Խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների

8 Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ

9 Դպրոցներին տրված հանձնարարականների և 2-րդ եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքներ

11 Ամփոփում

Նախաբան

2023 թվականի **2-**րդ եռամսյակում ստուգվել և ամփոփվել են **38** դպրոցների ստուգման արդյունքներ**:**

Նպատակը՝ դպրոցներում կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության ապահովման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացում:

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերվել են ստուգված 38 դպրոցներից 37-ում (97%), որոնց վերաբերյալ կազմվել է 37 ակտ:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» օրենքների, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող 15 նորմատիվ իրավական ակտերի 93 պահանջների կատարման խախտումներ:

38 դպրոցների ստուգման արդյունքների ամփոփ պատկեր

- 37 դպրոցներում հայտնաբերվել է 503 խախտում,
- 23 (61%) դպրոցների տրվել են 54 (11%) հանձնարարական,
- արձանագրված խախտումներից 449-ը (89%) վերացման ենթակա չեն:

Խախտումների մեծ թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք գործընթացներ տվյալ դպրոցը չի իրականացրել երկու կամ երեք ուսումնական տարի շարունակ:

Խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների

Ըստ դպրոցների և խախտումների թվի՝ առավել հաճախ կրկնվել են հետևյալ բնույթների խախտումները.

ըստ դպրոցների թվի՝

-մանկավարժական աշխատողների նշանակում՝ 25 ,
-ուսուցչի թափուր տեղի մրցույթի ընթացակարգ՝ 16,
-խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն՝ 13 դպրոցներ

ըստ խախտումների թվի՝

-խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն՝ 109,
-մանկավարժական աշխատողների նշանակում՝ 79,
-պաշտոնային պարտականությունների կատարում՝ 69 խախտում

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումների 82%-ը վերաբերել է ուսուցչի նշանակմանը:
Սահմանված պահանջների խախտումով նշանակված 52 մանկավարժական աշխատողներից 42-ը (80%) ուսուցիչներ են:

Ստուգումների ընթացքում հայտնաբերվել են նաև այլ բնույթների խախտումներ

- ուսուցչի թափուր տեղի մրցույթի ընթացակարգ
- ներքին գնահատման գործընթաց
- ուսումնական պլանի պահանջներ
- կրթության կազմակերպում
- վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածություն
- լիցենզիայի առկայություն
- սովորողների համակազմի ձևավորում
- կառավարման խորհրդի ձևավորում և գործունեություն
- դպրոցական օլիմպիադայի գործընթաց
- պարտադիր փաստաթղթերի վարում
- տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի ընթացակարգ
- զինղեկի, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ

Արձանագրված խախտումների տոկոսային համամասնությունը



Ստուգումների արդյունքներից հետևում է, որ դպրոցների գերակշռող մասը պատշաճ չի կատարում օրենսդրական պահանջների կատարումը, որն իր հերթին կարող է բացասական անդրադառնալ կրթության կազմակերպման, ինչպես նաև կրթության որակի վրա:

Խախտումներ 89 %-ը վերացման ենթակա չէ

Պատճառները՝

- կատարվել են նախորդող ուսումնական տարիներին,

- ավարտվել է տվյալ գործընթացի իրականացման ժամկետը,

- շտկվել է ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում

մանկավարժական աշխատողների պարագայում՝

- ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում լրացել է պահանջվող աշխատանքային ստաժը,

- փոխարինել է ժամանակավորապես,

- նշանակվել է մինչև մրցույթ,

- ազատվել է աշխատանքից:

Առավել հաճախ կրկնվել են վերացմանը ոչ ենթակա հետևյալ բնույթների խախտումները



Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ

Ստուգված **38** դպրոցներից հանձնարարականներ տրվել են **23**-ին **(61%):**

Դպրոցներին տրված հանձնարարականները կազմել են խախտումների **11%**-ը**:**

Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարականների **85%**-ը վերաբերել է ուսուցչի նշանակմանը:



Դպրոցներին տրված հանձնարարականների և 2-րդ եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքներ

2023 թվականի **2**-րդ եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **29** դպրոցների **102** հանձնարարականների համար:

Կատարողականների ներկայացումը՝ ըստ դպրոցների %-այինթվի



Ըստ ներկայացված 85 հանձնարարականների կատարողականների՝

- կատարվել են 41-ը (48%),
- մասամբ են կատարվել՝ 28-ը (33%),
- չեն կատարվել 16-ը (19%),

հանձնարարականների 53%-ը վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը. կատարվել են՝ 11-ը (24%),

մասամբ կատարված հանձնարարականների 93%-ը և չկատարված հանձնարարականների 50%-ը վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը:

Ամփոփում

Ստուգումների արդյունքների, ստուգված դպրոցներին տրված հանձնարարականների և 2-րդ եռամսյակում ներկայացված հանձնարարականների կատարողականների ամփոփումից հետևում է, որ գերակա խնդիրը շարունակում է մնալ մանկավարժական աշխատողների, հիմնականում՝ ուսուցիչների, սահմանված կարգի պահանջների խախտումով նշանակումը:

Հայտնաբերված խախտումների կրկնումը հետագայում կանխելու, ինչպես նաև խախտումները վերացնելու նպատակով առաջարկվել է սահմանել պատշաճ վերահսկողություն՝

Տնօրեններին

դպրոցի կրթական գործընթացի կազմակերպման, վարչական և մանկավարժական աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, մանկավարժական աշխատողների նշանակումն իրականացնել համաձայն պաշտոնների նկարագրերի, սահմանված կարգով անցկացնել ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, դպրոցի սովորողների համակազմի ձևավորումը և այլն:

Լիազոր մարմնին

դպրոցների կողմից կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման և հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման նկատմամբ: